Հարցաշար
Առարկայական օլիմպիադայի
«Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի
հանրապետական փուլ
9–րդ դասարան - 120 րոպե

N 1-4
Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. Ո՞ր նահապետից են առաջացել հրեական 12 ցեղերը. **(0,5միավոր)**
1) Աբրահամ
2) Իսահակ
3) Հովսեփ
4) Հակոբ

2. Ո՞րտեղ է թաղվել Ս. Արիստակես հայրապետը. **(0,5միավոր)**
1) Թորդան
2) Բագրևանդ
3) Թիլ
4) Տարոն

3. Ովքե՞ր գրավեցին Հռոմկլա կաթողիկոսանիստ ամրոցը. **(0,5միավոր)**
1) Մամլուքներ
2) Մոնղոլներ
3) Խաչակիրներ
4) Բյուզանդացիներ

4. Ո՞վ էր 1877-1878 թթ. Զեյթունի ապստամբության ղեկավարը. **(0,5միավոր)**
1) Վարդան վարդապետ
2) Բագրատ վարդապետ
3) Նիկողայոս եպիսկոպոս
4) Ներսես եպիսկոպոս

N 5-9
Կառուցված պատասխանով առաջադրանքներ

5. Խաչի վրա թափված արյամբ և հարությամբ Քրիստոսը մարդկության առջև բացեց _____ճանապարհը: **(1միավոր)**
6. Զրօրհնեքի ժամանակ ջրի մեջ իջեցվում է _____ը, որը խորհրդանշում է Հորդանան գետում Հիսուս Քրիստոսի մկրտությունը: **(1միավոր)**
7. 450թ. Ղևոնդ Երեցն ու նրա համախոհները _____ ավանում հարձակվում են մոգերի վրա: **(1միավոր)**

8.Զաքարյան Հայաստանում գտնվող եկեղեցական թեմերը ենթարկվում էին _____ի Հայոց կաթողիկոսությանը: **(1միավոր)**

9. 1844 թ. Կ.Պոլսի նորընտիր պատրիարք _____ը հրահանգում է արևմտահայ բոլոր եկեղեցիներում հիշատակել Ամենայն Հայոց հայրապետի անունը:

(1միավոր)

N 10-11

Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 4 փաստից

10. Կաթողիկոսանիստերը համապատասխանեցնել հայրապետական աթոռը այնտեղ տեղափոխած անձանց անուններին. **(1միավոր)**

1. Հեթում Բ	ա. Հռոմկլա	
2. Անանիա Ա	բ.Դվին	
3. Գրիգոր Գ	գ.Սիս	
4. Հովհաննես Ե	դ.Աղթամար	
	ե. Արգինա	

1	
2	
3	
4	

11.Իրադարձությունները համապատասխանեցնել թվականներին. **(1 միավոր)**

1. Սահակ կաթողիկոսի ազատումը աքսորից	ա. 485թ.
2. Վասպուրական թագավորության հիմնադրում	բ.1203 թ.
3. Պահլավունիների տոհմի կաթողիկոսական իշխանության ավարտ	գ. 1292թ.
4. Հռոմկլա կաթողիկոսանիստ ամրոցի գրավում	դ. 908 թ.
5. Վահան Մամիկոնյանի երկրի մարզպան դառնալը	ե. 443թ.
	զ. 432 թ.

1	
2	
3	
4	
5	

N12-13

Աշխատանք սկզբնաղբյուրով կազմված 2 հարցից

12. Հայոց թագավորը բարի խորհուրդ հանձն առավ՝ կամեցավ Քաղաքաղաշտի Սուրբ Գրիգոր անունով կառուցված, բայց քանդված Մեծաշեն եկեղեցին նույն ձևով ու չափով կերտել Անի քաղաքում:

1.Ու՞մ մասին է խոսքը: **(1միավոր)**

_____

2.Ու՞մ աշխատությունից է մեջ բերված հատվածը: **(1միավոր)**

_____

13. Նա շատ մեծ անուն էր հանել, անարատ և արդար մարդ էր, շատ առաքինի, հռետորական գիտության քաջագիտակ, Աստծո Հին ու Նոր Կտակարաններին քաջատեղյակ և ամեն տեսակետից կարող էր օգտակար լինել Քրիստոսի հոտին: Սուրբ Հոգին սրան մատնացույց արեց՝ նստելու իր նախահայր Սուրբ Գրիգոր Լուսավորչի աթոռին:

1.Ու՞մ մասին է խոսքը: (1միավոր)

_____

2. Ու՞մ աշխատությունից է մեջ բերված հատվածը: (1միավոր)

_____

N 14-16

Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն պահանջող առաջադրանք:

N 14

1. Ի՞նչ սկզբունքով է կազմված շարքը: Տվյալ շարքում ո՞ր անունն է ավելորդ: (0,5միավոր)

Նորավանք, Թանահատ, Ս.Խաչ, Տաթև, Հոռոմոս:

_____

2. Ի՞նչ սկզբունքով է կազմված շարքը: Տվյալ շարքում ո՞ր անունն է ավելորդ (0,5միավոր)

Վաղարշապատ, Անի, Դվին, Վան, Կարս:

_____

N 15

1. Գտնել ճիշտ շարքը: Ի՞նչ սկզբունքով է այն կազմված. (1միավոր)

ա. «Լուսավորչի կանթեղը», «Արարատ», «Ընտրյալը»
բ. «Մարգարե», «Լուսավորչի կանթեղը», «Ընտրյալը»
գ. «Եկեղեցին հայկական», «Արարատ», «Ընտրյալը»

_____

2.Գտնել ճիշտ շարքը: Ի՞նչ սկզբունքով է այն կազմված. (1միավոր)
ա. Գրիգոր Վկայասեր, Գրիգոր Տաթևացի, Գրիգոր Ապիրատ
բ. Գրիգոր Մագիստրոս Գրիգոր Ապիրատ, Գրիգոր Տղա
գ. Գրիգոր Վկայասեր, Գրիգոր Տղա, Գրիգոր Ապիրատ

_____

N 16

1. Բերված պնդումներից ո՞ր երկուսն են ճիշտ. *(2 x 0.5 = 1 միավոր)*
1) Ստեփանոս Ե Սալմաստեցին հրավիրում է Ծամանդավի ժողովը:
2) Գյուլիստանի պայմանագրով Ղարաբաղը դառնում է մելիքություն:
3) Նորակառույց Մայր տաճարը օծվում է 303թ. և անվանվում Սուրբ Աստվածածին:
4) Ներսես Աշտարակեցի կաթողիկոսի տապանաքարի վրա փորագրվել է «Արծիվ հայրենյաց» մակագրությունը:
5) Պողոս Նուբարյանը եղել է Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության հիմնադիրն ու առաջին նախագահը:

2. Բերված պնդումներից ո՞ր երկուսն են ճիշտ. *(2 x 0.5 = 1 միավոր)*

1) 1149 թ. հայրապետական աթոռը տեղափոխվում է Սիս:

2) 1113թ. Կարմիր վանքում գումարված եկեղեցական ժողովը կաթողիկոս է ընտրում Գրիգոր Գ Պահլավունուն:

3) Բագրատունի թագավորների տոհմական դամբարանն է եղել Թանահատի վանքը:

4) Սմբատ Արծրունին հայկական որոշ ձեռագրերում հիշատակվում է որպես թագավոր:

5) Սարգիս Ա-ի գահակալման ժամանակ գլուխ է բարձրացնում Պավլիկյանների աղանդը:

N 17

Խնդիր-առաջադրանք 4 հարցից *(4 x 0.5 = 2 միավոր)*

1. Ի՞նչ հիմքով է Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը դառնում կաթողիկոսական տեղապահ:
2. Ինչպիսի՞ մասնակցություն ունեցավ Հայոց եկեղեցին Հայրենական պատերազմին:
3. Ի՞նչ էր խնդրում Գևորգ արքեպիսկոպոսը Ստալինից 1945թ. ապրիլին նրա հետ ունեցած հանդիպման ժամանակ:
4. Ի՞նչ է եղել Գևորգ Չորեքչյան հայրապետի ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի անունով պատրաստած ընդարձակ նամակի բովանդակությունը, որը Հայաստանի կառավարությունը արգելում է առաքել: